Պարույր Սևակ

Մոսկվան նավահանգիստ

Առա՜նց գրքի ու քարտեզի,
առա՜նց թերթի:
Ի՞նչ է, մի՞թե ես տուրիստ եմ կամ օտար եմ:
Յուրաքանչյուր իմ երակով
Եվ տրոփով ջահել սրտի
Ես զգում եմ,
Ես տեսնում եմ խուփ աչքերով
Իմ աշխարհը
և իմ դարը:
Այո՛, առա՜նց քարտեզների,
առա՜նց գրքի,
առա՜նց թերթի:
Ես տեսնում եմ.
Իմ հոր ձեռքով
Եվ քո եղբոր աշխատանքով,
Անքնությամբ իմ ընկերոջ
Մեր կառույցներն են բարձրանում երկնի ներքո:
Մեր կառույցները վիթխարի,
Որ աշխարհի
Եվ մարդկության զարմացական ճիչն են կորզում.
Անապատով հանկարծ հսկա գետ է վազում,

Իմ Սևանա կղզին այսօր հայացքիդ դեմ
Փոխարկվում է թերակղզու,
Իսկ վաղն արդեն
Կղզու եթե՝
Կղզու ոչ թե կապույտ լճում,
Այլ օրեցօր անտառացող այգիների
Թունդ կանաչում:
Իսկ անտառի կանաչի տեղ,
Ուրի՛շ մի տեղ,
Հանկարծ կապույտ ծով է բուսնում,
Ծո՛վ, որ հլու չորեքթաթ է ինքը տալիս,
Խոնարհաբար ինքը գալիս
Եվ ցանկացած քո քաղաքի դուռն է հասնում:
Իսկ ցանկացած քո քաղա՞քը...
Ուրիշ էլ ի՞նչ,
Այդ ինչ քաղաք է ցանկալի,
Քան առաջին հերթին ինքը
Մոսկվան կարմիր:
Ուրի՛շ բան է փայտը կայմի
Եվ ուրիշ բան՝ նավը ծովում
Եվ ծովն ինքը:
Ամբողջ կյանքում ամեն տեսակ ծովից հեռու՝
Թաղված եղել ու թաղված է
Մոսկվան թավուտ անտառներում,
Որտեղ որքան սիրտդ ուզի
Դու կճարես և թի՛, և կա՛յմ,
Բայց ոչ երբեք ծով կամ օվկիան,
Առա՛նց շեշտի, առա՛նց հանգի,
Առա՛նց ինչ-որ մակդիրների փնտրտուքի:
Ո՛չ, ծնվում է այս երգն այնպես,

Ինչպես մորից առաջնեկն է ծնվում անգին,
Ինչպես հանկարծ սրտիդ խորքում,
Հաճախ նույնիսկ քեզնից թաքուն,
Սերն է ծնվում հանկարծակի:
Իսկ նման է թե սա երգի՝
Այս է պահված նրա խորքում.
-Մոսկվան հիմա դարձել է մի նավահանգիստ
Ո՛չ թե միայն հինգ ծովերի գոռ ալիքի,
Ո՛չ թե միայն նավերի ու նավակների,
Այլև հինգ մայր ցամաքների՛,
Այլև մարդո՛ւ և մարդկության վառ գալիքի:
Ու եթե դեռ ոմանց համար
Մոսկվան հիմա
Մի փարոս է միայն անմար,
Վաղն իսկապես պիտի դառնա
Հանգրվան ու նավահանգիստ,
Ուր պատմության նավն ահագին
Մրրկի միջից ու փորձանքի
Խարիսխները պիտի ձգի
Այս ափերում,
Որ այնուհետև իր արշավը շարունակի
Դեպի լուսե կոմունիզմի կապույտ հեռուն:

Մոսկվա